

Ծանուցանեմ Տէրութեան, զի մեր Տօնացոյց, ըստ իմոյ դիտաւորութեան այժմ սրբագրի ի Հոռմ, ըստ Ամսոց, ինչպէս օրինակ տուի սրբոյ ժողովոյն: Զայն հինք պաս, այսինքն Սրբոյ Հոգոյն, Այլակերպութեան, Սուրբ Խաչի ի Վառախաչ, Սրբոյն Յակոբայ և Սարսկսի՝ Ս. Փափն այժմ, առ ի խնդրուածս մեր վերացոյց, զի ոչ պահիցեմք, զի ծանր յոյժ է զայսքան պաղօս նպահել, և խոստացաւ զմեր Տօնացոյց ստամբել՝ իւր խարճօվ ի Վէնէտիկա...:

Այժմ մնամ և միշտ անփոփոխելի և ճշմարիտ Գեռապայծառութեան

Բարեկամ և եղբայր

Ի Լէօպօլիս 1723  
Մայիսի ԺԴ.

Յ(ովհաննէս). Ա(ւզոստինովիչ). Արհպա Լեհաց Երկրի Հայոց

### ԻԵ.

Յոգնան եպիսկոպոս հետեւեալ թուղթին մէջ Յարութիւն եպս.ին Հոռմ մտնելու լուրը առ Մխիթար հաղորդած ատեն՝ թէ և ուրիշ բան չ'ըսեր այդ մասին, սակայն անոր շարժառիթն եղած է յաջորդ տարւոյն մէջ կատարուելիք քահանայապետական մեծ Յորելեանը (Գոպեմք. «Կենսագրութիւններ երկու Հայ Պատրիարքներու...» էջ 143):

Ամենէն դիտելին սակայն այն է՝ որ թուղթս ուրիշ խիստ հետաքրքրական խնդիր մը երեւան կը բերէ յանձին Մխիթարայ: Անոր մասին Յաւիտենական Քաղքին մէջ խորհուածն ու ձեռնարկները՝ ո՛չ լոկ ազգային բարձրաստիճան եկեղեցականներու, այլ մինչև իսկ գերագոյն իշխանութեան կողմանէ՝ կու գայ ինքնին անգամ մ'ալ հաստատել Ուխտիս Հեղինակին հոյակապ և ոսկեշող ձիրքերը, որոնք՝ զոր օրինակ՝ սքանչացող հոգիներու սիրակէզ գոչել տուած են՝ նամակիս թուականէն 13 տարիներ առաջ՝ այսպէս. «Ո՛վ արուեսակդ և պայծառ աստղդ պատուական: «Ո՛վ լուսինդ լրացեալ լուսատու գիշերոյ և երեկոյացեալ ժամանակիս: Ո՛վ աղբիւրդ «գիտութեան և ակդ քաղցրահամ և առատարուխ՝ որպէս անհուն գետոց. առոգա «նելով գնացք գետոց քոց ուրախ առնեն զքաղաքս Աստուծոյ: Ո՛վ իմաստութեան «աղբիւր ուղիդ գնացք ընդ հետոցն Աստուծոյ: Ո՛վ հիմնարկող հաւատոյս մերոյ «հայկազնեացս»» ( «Schiarimenti e Documenti» էջ 11 ). և այլն, և այլն:

Գերարգելոյ աքրաճօր տեսան տեսան

Մխիթարայ վարդապետի եղբոր մերոյ ի Քրիստոս

Յայտ առնեմ սիրով, Յարութիւն եպիսկոպոսն ի ԺԹ գեկտեմբերի եմուտ ի Հոռմ, և եղբայր Մարկոսն ընդ նմա...: Եկն և տէր Յակոբն և երբ զգափ պատկերի միոյ, թարց գրոյ և ծանուցման՝ թէ զինչ պատկեր իցէ այն, որ պարտիմ տալ նկարել, կարծեցի թէ ընդ մօնսինեօրին, եղբայր Մարկոսին յղիցես և ծանուցես ինձ, իբրև հարց: ցնոսա, ասացին ոչ գիտեմք: Եւ մնաց որ հրամանքդ անձամբ եկեալ տայցես զնա նկարել, քանզի միշտ խորհէաք ընդ Սուգիաս եպիսկոպոսին, և նա ընդ տօն ձիւզէփին գտանել զկերպ և զեղանակ իմն՝ բերելոյ զքեզ ի Հոռմ, լինիլ հոգաբարձու ազգին մերոյ ողորմելոյ և այլն: Իսկ Աստուած տնօրինեաց այսպէս, զի սուրբ ժողովն կոչիցէ զքեզ այժմ քարոզութեան աղագաւ, որ եկեալ ուսուցանիցես զուխաւորսն Հայոց, որք են բազումք

1. stampare = տպագրել.